# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.08.2020թ.

## Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2020/174**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության 29.07.2020թ. թիվ 20/278 գրության հիման «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2020թ. թիվ 26/26-1/11705-2020 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2020/174 ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացույցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել 04.09.2020թ. ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**